# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ համայնք, 377810, հեռ. 093-77-46-51
2016թ. դեկտեմբերի 19

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Վ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Սյունիքի մարզի Ագարակ համայնքի 19.12.2016թ. ավագանու թիվ 7 նիստի թիվ 24<<Ա>>, 25<<Ն>> 26<<Ն>> 27<<Ա>> 28<<Ա>> 29<<Ա>> և 30<<Ն>> որոշումները:

Առդիր 11 թերթ:

Ագարակ համայնքի ղեկավար Մ. Մարտիրոսյան

10184
«26» 12 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ համայնք, 377810, հեռ. 093-77-46-51

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<19>> դեկտեմբերի 2016 թվականի N 24 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.12.2016Թ. ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով և 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0 համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

Հաստատել Ագարակ համայնքի 2016թ. դեկտեմբերի 19-ի համայնքի ավագանու թիվ 7 նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը:

1. Ագարակ համայնքի 2017թ. բյուջեի նախագծի հաստատման մասին:
2. Ագարակ համայնքում 2017թ. տեղական տուրքերի, տեղական վճարների դրույքաչափերի սահմանման մասին:
3. Ագարակ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափի որոշման մասին:
4. Ագարակի համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ համայնքի 2016թ. վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Ագարակ համայնքի 2017-2021թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հաստատման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ համայնք, 377810, հեռ. 093-77-46-51

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<19>> դեկտեմբերի 2016 թվականի N 25 -Ն

## ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի երրոդ կետով, 55-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0 համայնքի ավագանին ո ր ո շ ում է.

1.Հաստատել Ագարակ համայնքի 2017թ. բյուջեի նախագիծն ըստ հավելվածի(կցվում է):

| Կողմ(5) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| Է. Աբրահամյան | | |
| Ն. Հարությունյան | | |
| Գ. Մարտիրոսյան | | |
| Գ. Սահակյան | | |
| Վ. Մարտիրոսյան | | |

**Համայնքի ղեկավար՝** **Մ. Մարտիրոսյան**

2016թ. դեկտեմբերի 19

գ. Ագարակ

# ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ. ԲՅՈՒՋԵ
## ՄՈՒՏՔԵՐ - Ե ՄՈՒՏՆԵՐ

հազ. դրամ

| | | Վարչական բյուջե | Ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|
| Տարեսկզբի ազատ մնացորդ | X | | 20,5 |
| Հողի հարկ | X | 478,6 | X |
| Հողի հարկի տուգանք | X | 18,0 | X |
| Գույքահարկ | X | 350,0 | X |
| Գույքահարկի տուգանք | X | - | X |
| Հողի վարձակալության վճար | X | 327,0 | X |
| Հողի վարձավճարի տուգանք | X | 62,0 | X |
| Եկամտահարկ | X | | X |
| Տեղական տուրք | X | 8,0 | X |
| Այլ ոչ հարկային եկամուտներ | X | | X |
| Այլ մուտքեր Գույքի վաճառքից | X | 600,0 | X |
| Ընդամենը սեփական եկամուտներ | X | 1843,6 | X |
| Պատվիրակված լիազորություն | X | | X |
| Վարձատրվող հասարակ. աշխ-քներ | X | | X |
| Գույքի օտարումից մուտքեր | X | X | |
| Այլ կապիտալ տրանսֆերտներ | X | X | |
| Դոտացիա | X | 3500,0 | |
| *Ընդամենը մուտքեր* | X | 5343,6 | 20,5 |

## ՄԱՍՄԵՐ

հազ. դրամ

| Հ/Հ | Ծախսային հոդվածների անվանումը | Կառավարման-ապարատ | Սոցիալական պաշտպանություն | Մշակույթի ծառ. | Պահուստային ֆոնդ | Նախորդ տարիների պարտքեր | Ընդամենը վարչական բյուջե | Ընդամենը ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4111 | Աշխատողների աշխատավարձ և համարժեքներ | 4520,0 | | | | | 4520,0 | X |
| 4131 | Սոցիալական ապահովության վճարներ | | | | | | | X |
| 4211 | Գործուղումների և բանկային ծառայությունների ծախսեր | | | | | | | X |
| 4212 | Էներգետիկ ծառայություններ | 30,0 | | | | | 30,0 | X |
| 4213 | Ջեռուցման ծախսեր | 40,0 | | | | | 40,0 | X |
| 4221 | Կապի ծառայություններ | 96,0 | | | | | 96,0 | X |
| 4231 | Ներքին գործուղումներ | 54,0 | | | | | 54,0 | X |
| 4234 | Տեղեկատվական ծառայություններ | | | | | | | X |
| 4232 | համակարգչային ծառայություններ | | | | | | | X |
| 4261 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 20,0 | | | | | 20,0 | X |
| 4264 | Տրանսպորտային նյութեր | 200,0 | | | | | 200,0 | X |
| 4267 | Վենտադային և հանքային սենի նյութեր | | | | | | | X |
| 4411 | Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | | | | | | | X |
| 4239 | Մշակութային բնույթի այլ ծառ. | 36,0 | | | | | 36,0 | |
| 4634 | Այլ նպաստներ բյուջեից | | 80,0 | | | | 80,0 | |
| 4891 | Պահուստային միջոցներ | | | | 267,6 | | 267,6 | |
| 4772 | Այդ թվում համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային ճամ կատարվող հատկացումներ | | | | | | | |
| 5113 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 20,5 | | | | | | 20,5 |
| 5123 | Այլ մեքենաներ և [illegible] | | | | | | | |
| 6110 | ՄԵՐԱ ԳՈՒՄԱՐ [illegible] | | | | | | | |
| 6410 | ՀՈԴԻ ԻՐԱՑՈՒՄ [illegible] | | | | | | | |
| | Ընդամենը ծ[illegible] | 5016,5 | 80,0 | | 267,6 | | 5343,6 | 20,5 |
| | Տարեսկզբի մնացորդ | | | | | | | |

Կ.Տ.

Համայնքի ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ համայնք, 377810, հեռ. 093-77-46-51

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<19>> դեկտեմբերի 2016 թվականի N 26-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0 համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1.Հաստատել Ագարակ համայնքում տեղական տուրքերի, տեղական վճարների դրույքաչափերի սահմանումն համաձայն N1 և N2 հավելվածների(կցվում է):

**Կողմ(5)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Է. Աբրահամյան
Ն. Հարությունյան
Գ. Մարտիրոսյան
Գ. Սահակյան
Վ. Մարտիրոսյան

**Համայնքի ղեկավար՝** **Մ. Մարտիրոսյան**

2016թ. դեկտեմբերի 19

գ. Ագարակ

Հավելված 1

Ագարակ համայնքի ավագանու
2016թ. դեկտեմբերի 19-ի N 26-Ն որոշման

## Համայնքի վարչական տարածքում սահմանված տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը

| Հ/Հ | Տեղական տուրքերի տեսակները | Տեղական տուրքերի դրույքաչափերը |
|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծի համապատասխան նոր շենքերի , շինությունների /ներառյալ ոչ հիմնական շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել/ հիմնական օբյեկտների համար ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև | 2000 |
| 2 | Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել | 1000 |
| 3 | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել | 2000 |

Հավելված 2

Ագարակի համայնքի ավագանու
2016թ. դեկտեմբերի 19-ի N 26-Ն որոշման

## Համայնքի վարչական տարածքում սահմանված տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը

| Հ/Հ | Տեղական վճարների տեսակները | Տեղական վճարների դրույքաչափերը |
|---|---|---|
| 1. | Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 500.0 |
| 2. | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար | 500.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ համայնք, 377810, հեռ. 093-77-46-51

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<19>> դեկտեմբերի 2016 թվականի N 27 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0 համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1.Ագարակ համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 105.0 հազ. դրամ:

**Կողմ(5)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Է. Աբրահամյան
Ն. Հարությունյան
Գ. Մարտիրոսյան
Գ. Սահակյան
Վ. Մարտիրոսյան

**Համայնքի ղեկավար՝** **Մ. Մարտիրոսյան**

2016թ. դեկտեմբերի 19

գ. Ագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ համայնք, 377810, հեռ. 093-77-46-51

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<19>> դեկտեմբերի 2016 թվականի N 28-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և 32-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0 համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1.Հաստատել Ագարակի համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն N 1 հավելվածի(կցվում է):

2.ՈՒժը կորցրած ճանաչել Ագարակ համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 22-ի 29-Ա որոշումը:

**Կողմ(5)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Է. Աբրահամյան
Ն. Հարությունյան
Գ. Մարտիրոսյան
Գ. Սահակյան
Վ. Մարտիրոսյան

**Համայնքի ղեկավար՝** **Մ. Մարտիրոսյան**

2016թ. դեկտեմբերի 19

գ. Ագարակ

Հավելված N 1

Ագարակ համայնքի ավագանու

19.12.2016 թ. N 28-Ա որոշման

# ԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 5:

2.Աշխատակազմի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափերը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավար | 1 | 105 000 |
| | | |
| Գյուղապետարանի աշխատակազմ | | |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 83 000 |
| Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 72 751 |
| | | |
| | | |
| Տեխնիկական սպասարկման և ծառայություններ մատուցող անձնակազմ | | |
| Սոցիալական աշխատող - գրադանավար | 0.8 | 64 526 |
| Հավաքարար | 0.7 | 51 000 |

Ագարակ համյանքի ղեկավար՝ Մ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ համայնք, 377810, հեռ. 093-77-46-51

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<19>> դեկտեմբերի 2016 թվականի N 29-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0 համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է.

1. Ագարակ համայնքի 2016թ. վարչական բյուջեի պահուստային ֆոնդից համայնքի բնակիչներին նոր տարվա առթիվ նվերներ գնելու համար հատկացնել 135.3 հազար դրամ (4269 հոդված):

2.Ագարակ համայնքի 2016թ. վարչական բյուջեի պահուստային ֆոնդից համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին աշխատավարձ վճարելու համար հատկացնել 22.5 հազ. դրամ(4111 հոդված):

**Կողմ(5)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Է. Աբրահամյան

Ն. Հարությունյան

Գ. Մարտիրոսյան

Գ. Սահակյան

Վ. Մարտիրոսյան

**Համայնքի ղեկավար՝** **Մ. Մարտիրոսյան**

2016թ. դեկտեմբերի 19

գ. Ագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ համայնք, 377810, հեռ. 093-77-46-51

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<19>> դեկտեմբերի 2016 թվականի N 30-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0 համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ագարակ համայնքի 2017-2021թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը (կցվում է):

**Կողմ(5)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Է. Աբրահամյան
Ն. Հարությունյան
Գ. Մարտիրոսյան
Գ. Սահակյան
Վ. Մարտիրոսյան

**Համայնքի ղեկավար՝** **Ս. Մարտիրոսյան**

2016թ. դեկտեմբերի 19

գ. Ագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

# ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմեց համայնքի ղեկավար՝/ _____ / Մ. Մարտիրոսյան

Հաստատվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի

Ագարակ համայնքի ավագանու նիստում

.19.12.2016թ. թիվ 30-Ն որոշմամբ

Ագարակ համայնք 2016թ.

# Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 2

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 4

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 4

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը 6

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 7

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 9

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 10

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 11

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 12

3.1. Համայնքի զարգացման տեսլական 12

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 13

4. ՀԶԾ ֆինանսավորում 17

5. ՀԶԾ մոնիթորինգ 17

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

- Ագարակ համայնքը իր վարչական տարածքով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի խոշոր համայնքներից մեկն է: Ագարակ համայնքը ստեղծվել է 1996 թվականին Ագարակ գյուղական խորհուրդի հիմքերի վրա: Այս տարիների ընթացքում համայնքապետարանի, և <<Վորլդ Վիժն>> կազմակերպության համագործակցության արդյունքում լուծվել են համայնքի ենթակառուցվածքների վերանորոգման,գույքի պահպանման, բնակչության հանգստի կազմակերպման հետ կապված մի շարք խնդիրներ: Համայնքի 2016-2021թթ զարգացման ծրագիրը միտված է լուծելու համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի և հանգստի կազմակերպման խնդիրները,ապահովելու համայնքի զարգացումը: Ինչպես նաև նպաստելու գյուղատնտեսության զարգացմանը:
- Ագարակ համայնքի խնդիրները տարբեր են :

  1/Ագարակ գյուղում են գտնվում համայնքապետարանը, ակումբ –գրադարանը, բուժկետը:

  2/ Ագարակ գյուղի ներհամայնքային ճանապարհների որոշ հատվածները կիսաքանդ են և չունեն ծածկույթ: Գյուղում առկա է փողոցային լուսավորություն, սակայն որոշ թաղամասերում այն բացակայում է: Գյուղի հանդիսությունների դահլիճը վերանորոգման կարիք ունի:

  Գյուղում կա նաև խմելաջրի խնդիր:Գյուղի խմելու ջրի ներքին ցանցի որոշ հատված քայքայված է : Ներհամայնքային ճանապարհների որոշ հատվածներ ծածկույթ չունեն:

  3/ Ոռոգման ջուր չունենալու պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղմթերքների արտադրությունը: Հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, բանջարեղեն և այլ բանջարանաբոստանային կուլտուրաների արտադրությամբ: Այս արտադրությունը կախված է բնության քմահաճույքից:Անձրևային տարիներին որոշ չափով դեռ կարելի է բերք հավաքել, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 50-60%-ը: Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Գյուղտեխնիկայի բացակայության, ինչպես նաև երաշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում: Խոտի և խտացված կերի անբավարարության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:

## 2.Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1Համայնքի ընդհանուր նկարագրություն

" Ագարակ, Հագերակ – գյուղ Սյունիքի մարզում, Կապան քաղաքից մոտ 18 կմ արևելք, գեղատեսիլ լեռնաճյուղի վրա, Ողջի գետի ձախ կողմում: 1831թ. ուներ 81, 1897թ-ին՝ 929, 1939թ-ին՝ 553, 1959թ-ին՝ 217, 2016թ-ին՝ 179 հայ բնակիչ: Հիշատակվում է 12-13- րդ դդ. և մտնում էր Սյունիք աշխարհի Բաղք-Աճանան գավառի մեջ: Ագարակի շրջակայքում կան զանազան հնություններ, գերեզմանոցներ, տապանաքիր ունեցող խաչքարեր:Գյուղի Ս. Աստվածածին կոչվող եկեղեցին կանգուն է: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1025 մ բարձրության վրա: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը զով: Հաճախակի են չորային, երաշտի տարիները, որից շատ է տուժվում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին: Խմելու ջրով գյուղն ապահովված է 50%-ով: Ունի հիմնական դպրոց, բուժկետ, ակումբ-գրադարան: Խորհրդային կարգերի ժամանակաշրջանում գյուղը զբաղվում էր դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ, շերամապահությամբ, անասնաբուծությամբ:

" Աշխարհագրական դիրքի նկարագիր

" Ագարակ գյուղական համայնքը ներառում է մեկ բնակավայր՝ գ. Ագարակ :

- հեռավորությունը մայրաքաղաքից 300կմ, մարզկենտրոնից 18կմ
- վարչական տարածքը 1850,65հա, որից՝

| | Համայնքային /հա/ | ՀՀ քաղաքացիների /հա/ | Պետական / հա/ | Ընդամենը /հա/ |
|---|---|---|---|---|
| Վարելահող | 149.13 | 129.32 | - | 278.45 |
| Այգի | 6.43 | - | - | 6.43 |
| Խոտհարք | 27.21 | - | - | 27.21 |
| Արոտ | 570.35 | - | - | 570.35 |
| Այլ հողատեսքեր | 268.17 | - | - | 268.17 |
| Բնակավայրի հողեր | 29.21 | 26.84 | - | 57.88 |
| Արդյունաբերական | 3.04 | - | - | 3.04 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Նշան . հողեր | | | | |
| Էներգետ. Տրանսպ. և կապի | 3.35 | - | - | 3.35 |
| Հատուկ պահպ. Տարածքներ | - | - | - | - |
| Անտառային հողեր | - | - | 197.73 | 197.73 |
| Ջրային (գետեր) | 1.28 | - | 1.28 | 1.28 |

Համայնքի վարելահողերը կազմում է համայնքի վարչական տարածքի 8,05%-ը, խոտհարքը՝ 1,47%-ը, իսկ բնակավայրի հողերը՝ 3,1%-ը : Հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, բանջարեղեն և այլ բանջարանաբոստանային կուլտուրաների արտադրությամբ: Ոռոգման ջուր չունենալու, ինչպես նաև գյուղտեխնիկայի բացակայության պատճառով, վերոնշյալ հողամասերի մի մասը չի մշակվում:

- **Համայնքի ժողովրդագրական բնութագիրը**

| | | մշտական | առկա | Այդթվում ՝կանայք |
|---|---|---|---|---|
| 1 | Բնակչության թվաքանակը , մարդ | 168 | 179 | 92 |
| 2 | Տնային տնտեսությունների թվաքանակը | 58 | 57 | |
| 3 | Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններ | 1 տնտեսություն 1 մարդ | | |

- **Բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի**

| | | Ընդամենը /մարդ/ | Այդթվում կին |
|---|---|---|---|
| 1 | Մինչև 1 տարեկան | 3 | 2 |
| 2 | 1 -2 տարեկան | 1 | 1 |
| 3 | 3-4 տարեկան | 4 | 1 |
| 4 | 5-6 տարեկան | 4 | 1 |
| 5 | 7-10 տարեկան | 5 | 4 |
| 6 | 11-14 տարեկան | 9 | 5 |
| 7 | 15-17 տարեկան | 6 | 2 |
| 8 | 18-22 տարեկան | 20 | 7 |
| 9 | 23-45 տարեկան | 56 | 27 |
| 10 | 46-62 տարեկան | 34 | 15 |
| 11 | 63 և ավելի տարեկան | 35 | 23 |

Համայնքի բնակչության գերակշռող մասը կանայք են, որոնք կազմում են բնակչության 51,3%-ը, իսկ 63 և ավելի տարեկան բնակիչները կազմում են բնակչության 19,5%-ը, փախստականներ չկան, իսկ երկարատև ժամանակավոր բացակայում են 2 բնակիչ:

## 2.2Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 2016թ համար կազմում է 5792.3հազ. ՀՀ դրամ,
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը՝1780.0հազ.դրամ, որը կազմում է 30.7%
- Համայնքում արդյունաբերական ծառայություններ, մատուցող ձեռնարկություններ չկան :

- Բնակչության հիմնականո զբաղմունքը՝ անասնապահություն, հողագործություն : Արտադրված գյուղ մթերքների հիմնական մասը օգտագործվում է արտադրողների կողմից :

- Մեծ դժվարությամբ է իրացվում արտադրված մսամթերքը , որը ցածր գներով հանձնվում է վերավաճառողներին :

- Համայնքի տարածքում կա եկեղեցի ( Սուրբ Աստվածածին), որը 2009 - 2010 թթ . վերանորոգվել է <<Վորլդ Վիժն>> կազմակերպության և համայնքի բնակիչների մասնակցությամբ: Ագարակի շրջակայքում կան զանազան հնություններ, գերեզմանոցներ, տապանադիր ունեցող խաչքարեր, որոնք կարող են զբոսաշրջային հետաքրքրություն առաջացնել:

- Համայնքում գործում է 1 դպրոց:

Ագարակ գյուղում գործում է<< Ագարակի հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ը: Դպրոցի շենքը տիպային է, նախատեսված 172 աշակերտի համար,ունի վերանորոգման կարիք : Ներկայումս դպրոցում սովորում է 11 աշակերտ:

- Համայնքում կա 1 բուժկետ, 1 բուժքույր,որոնք սպասարկում են համայնքի բնակչությանը:
- Համայնքի 1 ընտանիք գրանցված է ընտանեկան նպաստների համակարգում, որը կազմում է բնակչության 1,8%-ը:

## 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

- Համայնքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար բյուջեների ֆինանսական համահարթեցման նպատակով նախատեսվում է տարեկան 3500000 ՀՀ դրամ դոտացիա:
- Ագարակ համայնքը գալիք հինգ տարիների ընթացքում հարևան համայնքների հետ համատեղ նպատակային ծրագրեր և միջոցառումներ չի պլանավորում:
- Ագարակ համայնքում միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների,արտասահմանյան երկրների համայնքների կողմից իրականացվող ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:
- Համայնքի հիմնախնդիրներն են՝

1)ոռոգման համակարգի վերակառուցումը,

2)դպրոցի վերանորոգումը,

3)խմելու ջրի ցանցի վերանորոգումը,

4)գյուղտեխնիկայի ձեռքբերումը

5)համայնքի ներքին ճանապարհների վերանորոգումը:

- Նշված հիմնախնդիրների լուծման, ծրագրերի մշակման, քննարկման համար անհրաժեշտ է ողջ բնակչության մասնակցությունը:
- Պետք է հրավիրվեն քննարկումներ ,ուսումնասիրվեն բոլոր առաջարկները և հավանության արժանացածները դարձնել հետագա աշխատանքների հիմնական ուղղություն :
- Նշված հիմնախնդիրների, լուծմամբ գյուղ մթերքների արտադրման ծավալները կավելանա շուրջ 40 – 50 %, համայնքը կունենա ապահով, վերանորոգված դպրոց, երեխաների ուսուցումն ավելի արդյունավետ կկազմակերպվի:
- Բնակչության սոցիալական վիճակի բարելավման հետ մեկտեղ ակնկալվում է բնակչության թվաքանակի աճ : Երիտասարդությունը աստիճանաբար կվերադառնա գյուղ :

Նշված ծրագրերի իրականացման արդյունքում համայնքում կլուծվի մի շարք խնդիրներ՝այդ թվում համայնքի բնակիչների սոցիալ–տնտեսական պայմանների բարելավում, մշակութային կյանքի և հանգստի կազմակերպում:

## 2.4Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Աղյուսակում տրվում է 2016 թվականի բյուջեի ֆինանսական միջոցների վերլուծություն և գալիք հինգ տարիների կանխատեսումները

| հ/հ | Մուտքերի անվանումը | 2016թ նախ | 2016թ փաստ | 2017թ կանխ | 2018թ կանխ | 2019թ կանխ | 2020թ կանխ | 2021թ կանխ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | Բյուջետային մուտքեր՝ ընդ . | 5792.3 | 5792.3 | 10792.3 | 53792.3 | 53792.3 | 53792.3 | 53792.3 |
| 1. | Հարկային եկամուտներ ընդ. | | | | | | | |
| 1.1 | Հողի հարկ | 478.6 | 478.6 | 478.6 | 478.6 | 478.6 | 478.6 | 478.6 |
| 1.2 | Գույքահարկ փոխադրամ . | 330.0 | 330.0 | 330.0 | 350.0 | 360.0 | 360.0 | 360.0 |
| 2 | Եկամուտներ հողի վարձակ. | 919.4 | 919.4 | 919.4 | 919.4 | 919.4 | 919.4 | 919.4 |
| | | | | | | | | |
| 3 | Սուբվենցիա | 512.3 | 512.3 | 512.3 | 512.3 | 512.3 | 512.3 | 512.3 |
| 4 | Դոտացիա | 3500.0 | 3500.0 | 3500.0 | 3500.0 | 3500.0 | 3500.0 | 3500.0 |

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 2016թ համար կազմում է 5792.3հազ. ՀՀ դրամ, որից դոտացիան կազմում է 3500.0հազ.դրամ՝ ընդհանուր եկամուտների 60,4%-ը, իսկ ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը՝1780.0հազ.դրամ, որը կազմում է 30.7%: Բյուջեի սղության պատճառով դոտացիան ուղղվում է աշխատավարձներին:

## 2.5Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

1 . Խմելու ջրի ցանցի վերանորոգում և խմելու ջրի նոր ներհամայնքային ցանցի կառուցում

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է համայնքի բնակչության ջանքերով 1960 թվականին : Ջրագծի երկարությունը կազմում է 5 կմ : Վերջին տարիներին տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով շարքից դուրս են եկել մոտ 55 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը:Այդ մաշվածության պատճառով անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց , որը վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ :

Բնակիչների կողմից վերանորոգումները կատարվում են մասնակիորեն , և որոշ դեպքերում դառնում անախորժությունների պատճառ բնակիչների միջև :

2 . Ոռոգման համակարգի վերանորոգում

Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է 1970 թվականին: Երբ կառուցվեց ոռոգման համակարգը, գյուղն ուներ մոտ 30 ծուխ: Այժմ, երբ գյուղն ունի 58 ծուխ և շատացել են հողամասերն ու պտղատու այգիները, ոռոգման համակարգը չի գործում: Տարիների ընդացքում ջրի պակասության , եղանակային պայմաններից, ջրագծի խողովակները քայքայվել , հիմնականում շարքից դուրս են եկել : Ընթացիկ նորոգումներ չեն կատարվել:

Ջրատարի հիմնովին նորոգման դեպքում կբարելավվի բնակչության սոցիալական վիճակը :

3 . Գյուղ.տեխնիկայի պակաս

Համայնքը ունի բավականին հողատարածքներ՝ 149 հա . վարելահող , որի մի մասը գյուղ տեխնիկայի պակասի պատճառով չի մշակվում կամ օգտագործվում է ոչ նպատակային :

Համայնքում եղած թրթուրավոր և անվավոր տրակտորները, որոնք նախկին խորհրդային ժամանակներից մնացած ժառանգություն են , դրանց վրա կատարած ծախսերը ավելի շատ են քան օգտակար գործակիցը :

Համայնքում չկա խոտհնձիչ կոմբայն, իսկ հացահատիկահավաք կոմբայնի պակասը հիմնական պատճառ է հանդիսանում ցանքսերի նվազման, քանի որ մինչև մոտակա գյուղերից կոմբայն կբերվի, բերքի հիմնական մասը գերհասունանում կամ ոչնչանում է կլիմայական պայմաններից ելնելով:

4. Համայնքի հիմն. դպրոցի վերանորոգում

Համայնքի հիմն. դպրոցն ունի մոտ 40 տարվա վաղեմություն: Դպրոցում սովորում է 11 աշակերտ: Վերջին անգամ այն վերանորոգվել է 1987թ.: Սակայն պատերազմը և տնտեսական ճգնաժամն իրենց հետևանքները թողեցին նաև մեր համայնքում: Հատկապես վնասվել է տանիքը:

5. Համայնքի ներքին ճանապարհների նորոգում

Ներհամայնքային ճանապարհների և փողոցների երկարությունը կազմում է 5կմ-ից ավելի, որից 1 կմ-ը կենտրոնական ճանապարհն է: Բարեկարգելով ճանապարհները այն կապահովի գյուղտեխնիկայի և տրանսպորտի բավարար երթևեկություն:

**2.6Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն:**

**Համայնքի ուժեղ կողմեր**

1 . Համայնքում տիրող առողջ մթնոլորտ

2 . Մեծ աշխատուժի առկայություն

3 . Բավարար տարածքներ հողագործության և անասնապահության համար

4 . Մարզպետարանի հետ կապող բարվոք ճանապարհ

**Համայնքի թույլ կողմեր**

1 . Խմելու և ոռոգման ջրի պակաս

2 . Ծնելիության նվազում ելնելով տնտեսական վիճակից

3 . Ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը

4 . Գյուղ տեխնիկայի պակաս

**Սպառնալիքներ(վտանգներ)**

1. Վթարային շենքերի առկայություն

2.Համայնքի հիմնական արդյունաբերական կամ գյուղատնտեսական արտադրանքի բացասական վարքագիծ(պահանջարկի անկում, գների նվազում, ուժեղ մրցակցություն, արտահանման արգելք և այլն)

**Հնարավորություններ**

1 . Աշխարհագրական դիրք

2 . Հիմնական տրանսպորտային հանգույցներին հեշտ հասանելիություն

## 3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում:

### 3.1 Համայնքի զարգացման տեսլական

ՀԶԾ իրականացումով համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական աճ կգրանցվի գյուղատնտեսության ոլորտում: Համայնքում, արդյունաբերական ձեռնարկության բացակայության պայմաններում հիմնական ուղղությունը լինելու է գյուղատնտեսությունը:

Անասնապահությունը և այգեգործությունը այն հիմնական ուղղություններն են,որոնց կայուն զարգացման համար ներդրումներ են անհրաժեշտ:

Հինգ տարիների ընթացքում տարեց-տարի սեփական եկամուտների աճ կգրանցվի: Համայնքում աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքներ չկան, սակայն սոցիալապես անապահով մեկ ընտանիք այլևս կարիք չի ունենա պետության կողմից տրվող օգնությանը:

Ծրագրի իրագործումով ակնկալվում է բնակիչների թվի փոփոխություն՝ դրական աճով:

**Աղքատ ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքներին և սեփական եկամուտների տարեկան աճը ըստ տարիների**

**Տես աղյուսակ N1**

**%-ով**

| h/h | Տարիներ | Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընդհանուր թվին | Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ | Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխություն | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1. | 2017թ. | 1,8 | 5 | 10 | |
| 2. | 2018թ. | 1,8 | 7 | 12 | |
| 3. | 2019թ. | 0 | 10 | 15 | |
| 4. | 2020թ. | 0 | 12 | 17 | |
| 5. | 2021թ. | 0 | 15 | 20 | |

**3.2 <u>Համայնքի զարգացման անմիջական նպատակներ:</u>**

Համայնքում յուրաքանչյուր պարտադիր խնդիրների լուծման, ֆինանսավորման համար անհրաժեշտ և հետևողական աշխատանքներ են տարվելու բարեգործների,նվիրատուների, խոշոր գործարարների և այլ աղբյուրներ հայտնաբերելու համար:

Գյուղտեխնիկայի ձեռք բերման համար անհրաժեշտ է մեր պայմաններին համապատասխան տեխնիկա: Դրանք են.

1. Կոմբայն – Е-302----1 հատ
2. Անվավոր տրակտոր, իր բոլոր սարքավորումներով----1 հատ
3. Կոմբայն – Нива մակնիշի----1 հատ
4. Պահեստամասեր(ըստ կարիքի)

Ոռոգման ցանցի վերակառուցումով կավելանա գյուղ-մթերքի արտադրությունը,նոր շուկայի ընդլայնում, աշխատատեղերի ավելացում: Հինգ տարիների ներդրումային բյուջեն կունենա հետևյալ պատկերը (տես աղյուսակ N2)

**Աղյուսակ 2**

**հ/դ**

| հ/հ | Ըստ տարիների | Ընդհանուր ծախսեր | Ընթացիկ ծախսեր | Կապիտալ ծախսեր | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1. | 2017թ. | 5000.0 | 1000,0 | 4000,0 | |
| 2. | 2018թ. | 12000.0 | 4000,0 | 8000,0 | |
| 3. | 2019թ. | 12000,0 | 4000,0 | 8000,0 | |
| 4. | 2020թ. | 12000,0 | 4000,0 | 8000,0 | |
| 5. | 2021թ. | 12000,0 | 4000,0 | 8000,0 | |

**Անմիջական նպատակներ տես հավելված N1**

Համայնքում նախատեսվում է իրականացնել 4 ծրագիր, որոնք բերելու են հետևյալ պարտադիր խնդիրների լուծմանը, մասնավորապես դրանք են՝ համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը, համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում, համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում:

**1. Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում**
**Ընդհանուր արժեքը- 4000.0 հ/դ**

**Ընթացիկ ծախսեր -1000,0 հ/դ**

1.Նախապատրաստական աշխատանքներ
2.Հողային աշխատանքներ
3.Խողովակների ձեռք բերում և տեղափոխում
4.Մասնագետների հետ համագործակցում

**Կապիտալ ծախսեր-3000,0 հ/դ**

1.Խողովակների տեղափոխում աշխ. վայր
2. Զոդման աշխատանքներ
3. Հողային աշխատանքներ
4.Համապատասխան մասնագետների վարձատրություն

**2. Գյուղ. տեխնիկայի ձեռք բերում**
**Ընդհանուր արժեքը- 25000.0 հ/դ**

**Ընթացիկ ծախսեր – 10000,0 հ/դ**

1.Բանակցություններ
2.Համապատասխան մասնագետների ուսուցման ծախսեր
3.Գյուղտեխնիկայի պահպանում և վերանորոգում

**Կապիտալ ծախսեր – 15000,0 հ/դ**

1.Գյուղտեխնիկայի ձեռք բերում
2.Տեղափոխման աշխատանքներ
3.Սպասարկման աշխատանքներ
4.Վարձատրության աշխատանքներ

**3. Համայնքի հիմն.դպրոցի վերանորոգում**
**Ընդհանուր արժեքը- 20000.0 հ/դ**

**Ընթացիկ ծախսեր – 4000,0 հ/դ**

1.Նախապատրաստական աշխատանքներ
2.Մրցույթ
3.Հրապարակում
4. Շինարարական նյութերի ձեռք բերում

**Կապիտալ ծախսեր – 16000,0 հ/դ**

1. Շինարարական նյութերի տեղափոխում աշխ. վայր
2. Վերանորոգման աշխատանքներ
3.Համապատասխան մասնագետների վարձատրություն

**4. Համայնքի ներքին ճանապարհների վերանորոգում**
**Ընդհանուր արժեքը- 4000.0 հ/դ**

**Ընթացիկ ծախսեր – 1000,0 հ/դ**

1.Նախապատրաստական աշխատանքներ
2.Ավազի, խճաքարի ձեռք բերում
3.Անհրաժեշտ վառելիքի ձեռք բերում

**Կապիտալ ծախսեր – 3000,0 հ/դ**

1. Ձեռք բերված նյութերի տեղափոխում աշխ. վայր
2. Վերանորոգման աշխատանքներ
3.Համապատասխան մասնագետների վարձատրություն

## 4.ՀԶԾ ֆինանսավորում

Համայնքի զարգացման ծրագրերի ֆինանսավորումը ակնկալվում է արտաքին դրամաշնորհների , բարեգործների, նվիրատուների և այլ աղբյուրներից: Համայնքի սեփական եկամուտները բավարար չեն ՀԶԾ-ի որևէ դրույթ ֆինանսավորելու համար: Ակնկալվող և նախատեսվող գումարը կազմում է 53000,0 հազ.դրամ:

- Որպես պոտենցիալ դոնոր նախատեսում ենք ծրագրային միջոցների որոշակի կամ ամբողջ մասի համար դիմել <<Վիվասել ՄՏՍ>> գլխավոր տնօրինությանը:

ՀԶԾ ընդգրկված ծրագրերի ֆինանսավորումը ամփոփված է հավելված 2-ում բերված աղյուսակում.

## 5.ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգի ծրագրերը, ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, տեղեկատվության աղբյուրները, ամփոփվում են մոնիթորինգի անձնագրում (հավելված-3) և կատարվելու են ըստ մոնիթորինգի հաշվետվության մասում նախատեսված կարգի:

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**«Խմելու ջրի ցանցի վերանորոգում»**
(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | 2. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ<br>Խմելու ջրի ցանցի վերանորոգում | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ՝<br>Վերանորոգված ցանցի հարաբերություն ցանցի ընդհանուր երկարության % | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 0 | 25 | 25 | 25 | 25 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br>Իրականացնելով այս ծրագիրը համայնքը կապահովի շուրջօրյա խմելու ջրով, կնվազի խմելու ջրի կորուստները, կզարգանա գյուղատնտեսությունը, կբարելավի գյուղի բնակիչների սոցիալ-տնտեսական պայմանները | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ՝<br>Օրական ջրամատակարարման տևողությունը ժամերով | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 4 | 4 | 8 | 12 | 16 | 24 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. աշխատուժի առկայություն<br>1.2. նախագծի կազմում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. տեխնիկատնտեսական ուսումնասիրություն<br>2.2. | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝4000000<br>Ընդհանուր բյուջեն՝4000000 | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Ֆինանսավորում չլինելը | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները, հողօգտագործողները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018-2021 | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ծրագրի իրականացմամբ համայնքի բնակչությունը կունենա շուրջօրյա անխափան ջրամատակարարում՝ յուրաքանչյուր շնչին բաժին հասնելով սահմանված նորմային: | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## « Գյուղ. տեխնիկայի ձեռք բերում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="6">2. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ<br>Գյուղտեխնիկայի ձեռքբերում</td><td rowspan="4">Ցուցանիշներ՝<br>Համայնքային սեփականություն հանդիսացող նոր գյուղ.տեխնիկայի հարաբերությունը փաստացիին %</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>20</td><td>20</td><td>20</td><td>20</td><td>20</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="6">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.մրցույթներ<br>1.2.հրապարակում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.<br>2.2.</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="6">Ընթացիկ ծախսեր<br>Կապիտալ ծախսեր - 25000000<br>Ընդհանուր բյուջեն – 25000000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="6"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="6">Ֆինանսավորման բացակայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="6">Համայնքի տնտեսությունները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="6">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="6">Ծրագրի իրականացմամբ համայնքի տնտեսությունները տարեց-տարի ցանքատարացքների ընդլայնման պայմաններում, ակնկալվող բերքի ծախսերի աճի և շուկա արտահանելու դիմաց կունենան կայուն երկարաժամկետ տնտեսական աճ:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**«Համայնքի ներքին ճանապարհների նորոգում»**

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ<br>Համայնքի ներքին ճանապարհների բարելավում</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ՝ վերանորոգված ճանապարհի հարաբերությունը առկա ճանապարհներին %</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td>25</td><td>25</td><td>25</td><td>25</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br>5կմ ներհամայնքային ճանապարհների ավազի, խճաքարի և կավի խառնուրդի փռում՝ ապագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ</td><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ՝ միջանկյալ արդյունքների հարաբերությունը փաստացի վիճակին %</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td>25</td><td>25</td><td>25</td><td>25</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները<br>Իրականացնելով այս ծրագիրը, համայնքը կունենա բարեկարգ ճանապարհներ: Այն կապահովի գյուղտեխնիկայի և տրանսպորտային բավարար երթևեկություն, կխթանի անվտանգ բեռնափոխադրումներ</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. աշխատուժի առկայություն<br>1.2. նախագծի կազմում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. տեխնիկատնտեսական ուսումնասիրություն<br>2.2.</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝4000000<br>Ընդհանուր բյուջեն՝4000000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Ֆինանսավորում չլինելը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները, տրանսպորտի սեփականատերերը, հողօգտագործողները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2018-2021</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Ներհամայնքային ճանապարհների և փողոցների երկարությունը կազմում է 5կմ-ից ավելի, որից 1 կմ-ը կենտրոնական ճանապարհն է: Բարեկարգելով ճանապարհները այն կապահովի գյուղտեխնիկայի և տրանսպորտի բավարար երթևեկություն:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**«Համայնքի հիմն. դպրոցի վերանորոգում»**
(Ծրագրի անվանում)

| | |
|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | 8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը |
| Ծրագրի անմիջական նպատակ Համայնքի հիմն.դպրոցի վերանորոգում | 1. |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ Համայնքը կունենա ապահով դպրոց, երեխաների ուսուցումն ավելի արդյունավետ կկազմակերպվի | 2 . |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.<br>1.2.<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.<br>2.2. |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝20000000<br>Ընդհանուր բյուջեն՝20000000 |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Ֆինանսավորում չլինելը |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018-2021 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Այս ծրագրի իրագործմամբ բարենպաստ պայմաններում կապահովի հոգեֆիզիկական դաստիարակությունը, կբարելավի երեխաների կրթական մակարդակը:Ծնողներն ավելի ապահով կզգան: |

| Ցուցանիշներ՝ դպրոցի վերանորոգման աստիճան % | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | 0 | 0 | 25 | 25 | 25 | 25 |

| Ցուցանիշներ՝ հարցում գոհունակության աստիճան % | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | 0 | 0 | 25 | 25 | 25 | 25 |

ՀՀՋՀ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱ
(Ագարակ հա
(2017-2021

| Պարտադիր խնդիր | Բյուջետավորված միջոցներ | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | | Ֆինանսավորման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | Համայնքի սեփական եկամուտներ | Ներքին պաշտոնական դրամաշնորհներ | Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ |
| **1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում** | | | | | | | | | |
| **2. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում ա)խմելու ջրի ցանցի վերանորոգում բ)գյուղ.տեխնիկայի ձեռք բերում** | | բ)5000,0 | ա)1000,0 բ)5000,0 | ա)1000,0 բ)5000,0 | ա)1000,0 բ)5000,0 | ա)1000,0 բ)5000,0 | | | |
| **3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն** | | | | | | | | | |
| **4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ** | | | | | | | | | |
| **5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն** | | | | | | | | | |
| **6. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը** | | | | | | | | | |
| **7. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը** | | | | | | | | | |

Ն ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
մայնք)
թթ.)

| ն աղբյուրներ | | | Ծախսերի դասեր | | Ֆինանսավորման կարգավիճակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բարեգործություն/նվիրատվություն | Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն | Այլ աղբյուրներ | Ընթացիկ ծախսեր | Կապիտալ ծախսեր | Ֆինանսավորումն առկա է | Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ | Ներկայացվել է ֆինանսավորման հայտ | Ֆինանսավորման հարցը լուծված չէ |
| | | | | | | | | |
| ա)4000,0<br>բ)25000,0 | | | | ա)4000,0<br>բ)25000,0 | | | | ա)v բ)v |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | v | | | | |
| | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը ա)Համայնքի հիմն. դպրոցի վերանորոգում | | | 5000 | 5000 | 5000 | 5000 | | | |
| 9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում ա)համայնքի ներքին ճանապարհների նորոգում | | | 1000 | 1000 | 1000 | 1000 | | | |
| 10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը | | | | | | | | | |
| 11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում | | | | | | | | | |
| 12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը | | | | | | | | | |
| 14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում | | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20000 | | | | 20000 | | | | v |
| 4000 | | | | 4000 | | | | v |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում | | | | | | | | | |
| 16.Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում | | | | | | | | | |
| 17.Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում | | | | | | | | | |
| 19. Բարեգործության խթանում | | | | | | | | | |

| Տրամաբանական մոդելի բաղադրիչ | Ցուցանիշի փաստացի արժեք (2015) | Ցուցանիշի կանխատեսվող արժեք (2016) | Ցուցանիշի թիրախային արժեք (2017) |
|---|---|---|---|
| **Համայնքի կայուն զարգացում** | | | |
| Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով) | 1,8 | 1,8 | **1,8** |
| Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով | 5 | 5 | 5 |
| Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով | | | 10 |
| **2. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում մլն/դ ա)խմելու ջրի ցանցի վերանորոգում % բ)գյուղ.տեխնիկայի ձեռք բերում %** | 0 | 0 | բ)20 |

| | | | |
|---|---|---|---|
| Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը<br>ա)Համայնքի հիմն. դպրոցի վերանորոգում % | **0** | 0 | 0 |
| 9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում<br>ա)համայնքի ներքին ճանապարհների նորոգում % | **0** | 0 | 0 |

**ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

Ագարակ համայնք

(2017-2021 թվականներ)

| Ցուցանիշի փաստացի արժեք (2017) | Ցուցանիշի կատարողական (2017) | Ցուցանիշի թիրախային արժեք (2018) | Ցուցանիշի փաստացի արժեք (2018) | Ցուցանիշի կատարողական (2018) | Ցուցանիշի թիրախային արժեք (2019) | Ցուցանիշի փաստացի արժեք (2019) |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| **1,8** | **1,8** | **1,8** | **1,8** | **1,8** | **0** | **0** |
| 5 | 5 | 7 | 7 | 7 | 10 | 10 |
| 10 | 10 | 12 | 12 | 12 | 15 | 15 |
| ա)25 բ)20 | ա)25 բ)20 | ա)25 բ)20 | ա)25 բ)20 | ա)25 բ)20 | ա)25 բ)20 | ա)25 բ)20 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 0 | 0 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 |
| 0 | 0 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 |

| Ցուցանիշի կատարողական (2019) | Ցուցանիշի թիրախային արժեք (2020) | Ցուցանիշի փաստացի արժեք (2020) | Ցուցանիշի կատարողական (2020) | Ցուցանիշի թիրախային արժեք (2021) | Ցուցանիշի փաստացի արժեք (2021) |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** |
| 10 | 12 | 12 | 12 | 15 | 15 |
| 15 | 17 | 17 | 17 | 20 | 20 |
| ա)25 բ)20 | ա)25 բ)20 | ա)25 բ)20 | ա)25 բ)20 | ա)25 բ)20 | ա)25 բ)20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 |
| ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 | ɯ)25 |

| Ցուցանիշի կատարողական (2021) | Տվյալների հավաքագրման պարբերականությունը | | Ցուցանիշի ստացման աղբյուր | Ցուցանիշի ստացման մեթոդ |
|---|---|---|---|---|
| | Կիսամյակային | Տարեկան | | |
| | | | | |
| **0** | | X | Մարզպետարան-ներ (Երևան, Գյումրի, Վանաձոր, Արարատ, Ջերմուկ համայնքների | Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց |
| 15 | | X | Համայնքապետա-րան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| 20 | | X | ՀՀ Ոստիկանություն | Հարցում |
| ա)25 բ)20 | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ɯ)25 | | | | |
| ɯ)25 | | | | |